ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 փետրվարի 2018 թվականի N 03-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1358-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը *որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի որակի ապահովման ստորաբաժանման (այսուհետ՝ որակի ապահովման ստորաբաժանում) գործունեության 2018 թվականի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունելու օրվան հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ Ա.ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ բնապահպանության նախարարության
բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի
կառավարման խորհրդի 2018 թվականի
փետրվարի 15-ի N 03-Ա որոշման

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Որակի ապահովման ստորաբաժանման գործունեությունն իրականացվում է որակի ապահովման տարեկան ծրագրի հիման վրա:

Որակի ապահովման ստորաբաժանման գործունեության տարեկան ծրագիրը՝

1) հանդիսանում է որակի ապահովման ստորաբաժանման գործունեության պլանավորման փաստաթուղթ,
2) ներառում է որակի ապահովման ստորաբաժանման կողմից տեսչական մարմնում առկա ռիսկերի բացահայտման, թերությունների վերհանման և գնահատման գործողությունների նկարագրությունը,
3) ընդգրկում է 2018 թվականին կատարվելիք աշխատանքները:

II. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Որակի ապահովման ստորաբաժանման գործունեությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) գործունեության շարունակական կատարելագործման ապահովմանը՝ տեսչական մարմնի նպատակների ու խնդիրների իրականացման և տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ամբողջական իրագործման նպատակով:

3. Որակի ապահովման ստորաբաժանումը իրականացնում է ներքին հսկողական գործառույթ, որն ուղղված է տեսչական մարմնի գործունեության արդյունքի մեծացմանը, արդյունավետության բարձրացմանը և տեսչական մարմնի գործունեության բարելավմանը: Այն տեսչական մարմնին աջակցում է մարմնի ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով հասնել իր նպատակների իրագործմանը:

4. Որակի ապահովման ստորաբաժանման գործունեությունն ուղղված է տեսչական մարմնում ներքին հսկողության իրականացմանը հետևյալ ուղղություններով՝

1) կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն.

2) բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն.

3) տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն:

III. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

5. Որակի ապահովման ստորաբաժանման գործունեության 2018 թվականի ծրագրի կազմման համար հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 27-ի N 445-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 25-ի N 693-Ն որոշումը:

6. Որակի ապահովման ստորաբաժանման 2018 թվականի գործունեության տարեկան ծրագիրը ներառում է տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրման և վերլուծության գործընթացներ՝ ուղղված հնարավոր ռիսկերի բացահայտմանը, թերությունների վերհանմանը, դրանց գնահատմանը և բացահայտված ռիսկերի կառավարմանը՝ ներքին հսկողության իրականացմամբ:

№	Գործառույթի անվանում	Միջոցառման և/կամ ստորաբաժանման անվանում	Համառոտ նկարագրություն	Կատարման ժամկետ
1	Կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ ներքին հսկողության իրականացում և արդյունքների վերլուծություն	Տեսչական մարմնի կառուցվածքային և/կամ տարածքային ստորաբաժանումներ	Տեսչական մարմնի ղեկավարի 2017 թվականի հոկտեմբերի 6-ի N155-Լ հրամանով սահմանված կանոնների պահպանման նկատմամբ ներքին հսկողության իրականացում: *մասնավորապես՝* -կարգապահական կանոնների պահպանման նկատմամբ ներքին հսկողություն - էթիկայի կանոնների պահպանման վիճակի պարզում - Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրում առկա տվյալների հետ և անհամապատասխանության դեպքում հավաստիության ճշտում:	պարբերաբար
2	Բողոքների պատճառների և արդյունքների վերլուծության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում	Տեսչական մարմնի կառուցվածքային և/կամ տարածքային ստորաբաժանումներ	*մասնավորապես՝* - ուսումնասիրվում են բողոքների պատճառները, - Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրում առկա տվյալների հետ և անհամապատասխանության դեպքում հավաստիության ճշտում, - վերլուծվում են արդյունքները, - վերհանվում են թերությունները, - ներկայացվում են Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու և անգործությունը վերացնելու վերաբերյալ առաջարկություններ:	յուրաքանչյուր կիսամյակ

3	Տեսչական մարմնի կայքէջի տեղեկատվական սպասարկման իրականացման նկատմամբ ներքին հսկողություն	Իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին	*մասնավորապես՝* - Տեսչական մարմնի կայքէջի ուսումնասիրություն և վերլուծություն - կայքէջի թարմացման հաճախականության վերլուծություն - տեղադրված տեղեկատվության արդիականության և արժանահավատության ուսումնասիրություն - Տեսչական մարմնի գործունեության լուսաբանման մակարդակի վերլուծություն	յուրաքանչյուր կիսամյակ
4	Բնապահպանության ոլորտի վարչական վիճակագրական հաշվետվությունների սահմանված կարգով ընդունման, ոլորտի գործող տնտեսավարող սուբյեկտների ռիսկերի գնահատման աշխատանքների վերլուծման և դեպի առավել ռիսկային ոլորտների վերահսկմանն ուղղված գործառույթների նկատմամբ ներքին հսկողության իրականացում	Ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն	*Ուսումնասիրվում և վերլուծվում են վարչության կողմից կատարված աշխատանքները նշված գործառույթի շրջանակներում, մասնավորապես պարզվում են՝* - առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտների հայտնաբերման առնչությամբ իրականացված գործողությունների արդյունքները և դրանց վերաբերյալ տվյալների հավաքագրման ուղղությամբ տարված աշխատանքները - տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի հավաստի գնահատման նկատմամբ վերլուծություն - տեղեկատվական բազայի (բազաների) ստեղծման և վարման նպատակով կատարված աշխատանքները (ուսումնասիրված ռիսկային ոլորտները, տնտեսվարող սուբյեկտների քանակը և այլն)	պարբերաբար

5	Իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ նշանակված վարչական տուգանքի որոշումների կատարման և շրջակա միջավայրին պատճառված վնասի փոխհատուցման պահանջների ապահովման վերաբերյալ գործառույթների իրականացման նկատմամբ ներքին հսկողություն	Տեսչական մարմնի կառուցվածքային և/կամ տարածքային ստորաբաժանումներ	*պարզվում են՝* - այն բոլոր վարչական տուգանքների և շրջակա միջավայրին պատճառված վնասի փոխհատուցման պահանջների ապահովման վերաբերյալ որոշումներով սահմանված ժամկետում վճարման ենթակա գումարների չվճարման պատճառները *համեմատվում են՝* - չվճարված գումարները հարկադիր կատարման ներկայացրած գումարների հետ՝ տարբերությունները հայտնաբերելու նպատակով *պարզվում են՝* - Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա դրամական պահանջները տեսչական ծառայողների կողմից հարկադիր կատարման չներկայացնելու պատճառները - Դատական կարգով բռնագանձման չներկայացնելու պատճառները	պարբերաբար
6	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողության իրականացման նկատմամբ ներքին հսկողություն՝ - մթնոլորտային օդի պահպանության բնագավառում - ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության բնագավառում - ընդերքօգտագործման և պահպանության բնագավառում - հողերի օգտագործման և պահպանության բնագավառում - կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության	Տեսչական մարմնի կառուցվածքային և/կամ տարածքային ստորաբաժանումներ	*մասնավորապես՝* - հանձնարարագրի կամ հրամանի համապատասխանության գնահատում ստուգման իրավական հիմքերին - իրականացված ստուգման նյութերի ամփոփման արդյունքում կազմված փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության գնահատում գործող օրենսդրությանը: - Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրում առկա տվյալների հետ և անհամապատասխանության դեպքում հավաստիության ճշտում:	առնվազն 3-րդ ստուգման ավարտից հետո, բայց ոչ ուշ քան 7-րդ ստուգումը

	բնագավառում - վտանգավոր նյութերի, արտադրության ու սպառման թափոնների բնագավառում			
7	Տեսչական մարմնին տրված հանձնարարականների (ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության), ինչպես նաև Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներին տրված հանձնարարականների (Տեսչական մարմնի կառավարման խորհրդի, Տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի տեղակալների) կատարման և արդյունքների նկատմամբ ներքին հսկողության իրականացում	Տեսչական մարմնի կառուցվածքային և/կամ տարածքային ստորաբաժանումներ	*մասնավորապես՝* - սահմանված ժամկետներում կատարման նկատմամբ հսկողության իրականացում, - աշխատանքների կատարման որակի նկատմամբ հսկողության իրականացում, - կատարված աշխատանքների արդյունքում կազմված փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության գնահատում գործող օրենսդրությանը: - Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների արդյունավետությունը բարձրացնելու և անգործությունը վերացնելու վերաբերյալ ներկայացվում են առաջարկություններ:	ընթացիկ